

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵՄԲԵՐ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
«Ուրիշ» համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտատպանի համար (երկու քիւր մեկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ. Ա. Ռ. Ա. (Պուլկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
«И р а в у н к ъ»
ВАРНА (България)
Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյնովին կամ մասամբ.
Իսկուցման տղը 20 ասնքիւն. երե-
թեկ աւելի անգամներու համար 20 0/0
գնդ կը լինի:

ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՈՒԻ

Բ.

Սոյն յօդուածի Ա. մասով ապա-
ցուցինք թէ ամեն հայ անհատ ազ-
գային գոյութիւնը պահպանելու
կռուոյն մէջ իր տեղը եւ իր բա-
ժինը անհրապեւտօրէն ունենալ
պարտի այժմ կուգանք բացա-
արել թէ մեր ազգային գոյու-
թեան կռուոյն ամենազլխաւոր կէ-
տերը որոնք են:

Անշուշտ սա պարզ է թէ մեր
մեծագոյն թշնամին կամ հակառա-
կորդը Սուլթան Համիտի բռնա-
պետութիւնն է, որ մեզ պատճա-
ռեց անհնարին կորուստներ: Ըստ
ոմանք մի միայն հայ յեղափոխա-
կան շարժումը դրդապատճառ եւ
ղած կը կարծուի համիտական վար-
չութեան մեզ դէմ զինակերպ.
սակայն մեր համոզումը սա է թէ
Յեղափոխական շարժումը չէր որ
համիտի թշնամութիւնը մեզ դէմ
զրգուց, այլ անոր հայոց դէմ
ստեղծած հալածանքն էր որ ձե-
նունդ տուաւ հայկական յեղափո-
խութեան: Բացատրենք:

Յեղափոխական շարժումներէ
շատ առաջ արդէն սխալմա-
թիք հայածանքը սկսած էր Հայոց
դէմ, իսկ երբ աւելի առաջ անց-
նինք կը տեսնենք թէ գրեթէ Կը-
րաստային կեանք մըն էր որ կը
վարէին հայերը Հայաստանի մէջ
մանաւնդ գիւղացիք: Դարուս ու-
զին եղող յառաջդիմական ձգտ-
ումները Եւրոպայէն ծնունդ առ-
նելով երբ Պոլիս եւ գաւառներ քը-
րիստոնեայ սարրին մէջ հետզհե-
տէ տարածուիլ սկսած էին թուր-
քիոյ իսլամ ժողովուրդը այդ յա-
ռաջդիմական ձգտումներէն բոլո-
րովին անմասն կը մնար. Եւնիչէ-
րիներու ջնջումէն վերջ Օսմ. Քը-
րիստոնեայ հպատակները երկրին
մէջ նիւթապէս եւ բարոյապէս տի-
րող հանգամանք մը կը ստանային.
սրտտես թուրք մը այս երեւոյթին
առջեւ չէր կարող անտարբեր մը-
նալ, վերջապէս գտնուեցան Միտ
հատ բաշա եւ իրեն նման խորհող-
ներ, որոնք Օսմ. Սահմանադրու-
թիւնը յղացան իրր գարման թուրք
տարրին խաւարակուս կրօնամո-

լութենէ սթափումին: Եւր դեռ
Ռուսթրքական վերջին պատե-
րազմը չէր հրատարակուած ու
Պուլկարիան թուրք բռնակալու-
թեան տակ տակաւին կը հեծէր, եւ
Ռուստոնքի վալին Միտհատ բաշա
ամեն օր մի քանի Պուլկարմներ կա-
խել կուտար. ճիշդ այդ տեսները
Միտհատ Օսմ. Սահմանադրութեան
գաղափարը յղացած ըլլալով իր
մէկ մտերիմին գրած էր նամակ
մը, որուն ընդօրինակութիւնը 4-5
տարի առաջ կարդալու առիթը ու-
նեցայ. Միտհատ այդ նամակով
կըսէր, «Երկրին մէջ քրիստոնեայ
աղգուլիւնները իրենց կրօնակից
Եւրոպայէն ընդօրինակուելով հըս
կայաքալ յառաջացման մէջ են,
մինչդեռ իսլամը կը քնանալ: Բը-
նական է որ յառաջագէտ ժողովուրդ-
ը յետագէտ ազգի մը հպատակ
մնալ չուզիր ու ամեն գնով կը ջա-
նայ տիրող տարրն ինք ըլլալ. այդ
պարագային քրիստոնեայ պետու-
թիւնք ալ կը միջամտին: Ուստի
իսլամը տիրող տարր մնալու հա-
մար իրենց հայրենակից քրիստոն-
եաներուն չափ գոնէ յառաջդիմե-
լու են. բայց ցորչափ երկուքն ալ
ազատ մնան կարելի չէ որ իսլամը
քրիստոնէից հասնին. զի այս վեր-
ջինները բաւական յառաջացած են
արդէն: Արդ միակ միջոց մը կայ
մեզ, այն է Սահմանադրութեան
գործադրութիւնը, որով թէ Եւ-
րոպայի միջամտութեան առջեւ
պատուար մը կանգնած կը լինինք
զմեզ սահմանադրական տղգ ցոյց
տալով եւ թէ երեսփոխանական Ժո-
ղովրդ մէջ բազմաթիւ իսլամ երես-
փոխաններու ձայնին մէջ փոք-
րութիւ քրիստոնէից ձգտումները
ու ձայնը խեղդելով իսլամ հասա-
րակութիւնը յառաջդիմութեան
ճամբուն մէջ կը դնենք ու քրիս-
տոնեաները կը կասեցնենք որչափ
որ հնար է. ահա այս միջոցը մի-
այն ունինք կայսրութեան ամբող-
ջութիւնը պահելու:»

Եւրոպայի թուրքերու մեծ
վարդապետին, Միտհատի այս
նամակը թէ իր հետեւողներուն
ձգտումները կը լուսարանէ եւ թէ
Սուլթան Համիտի Օսմ. Սահմա-
նադրութիւնը չնչնէ վերջ բռնած
հայալինջ քաղաքապետութեան

նպատակը կը պարզէ: Այն ատեն
Միտհատ քրիստոնեաները կոտո-
րել չէր կարող մտաբերել որովհե-
տեւ Պուլկարիան սարսափներուն
հետեւանօք հիւսիսային քամին
գոռալ սկսած էր. բայց Համիտ
քանի մը տարի վերջ եւրոպական
պետութեանց իրարու ներհակ քա-
ղաքականութիւնը զննելով ինք-
զինքը բաւական ապահով զգաց
հայալինջ ծրագիր մը պատրաս-
տելու, զի մերձակայ ապագային
ամենամեծ վտանգը, հայկական
խնդրոյն մէջ կը տեսնէր, որ ար-
դէն Պերլինի 61 յօդուածով սաղ-
մնաւորած էր:

Յ. Վահագն

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հազարին, 8 սեպտ. 99

Կարծեմ «Իրաւունք»ի ընթեր-
ցողները չեն մոռցած մեր նախորդ
դէպքը (*) ուստի՝ այս եւս նրա
շարունակութիւնը պէտք է նկա-
տել ու կարդալ, հաստատ միտք
մը կազմելու համար թէ հայերը
ինչ յաջողութիւն ունեցան եւ
պարսիկները ինչ մնաս:

Նախ կարեւոր է ասել որ՝ ա-
ռաջ մայրաքաղաքից այստեղ հա-
սան ուսուց դեսպանատան օգնա-
կան Պ. Նիքոլայսքի եւ իր թարգ-
մանը՝ Եկոն նաեւ պարսից կա-
ռավարութեան կողմէ պաշտօնեա-
ներ եւ մօտ 250 ձիաւոր իրենց
հետ ունենալով երեք լծնաւոր-
ներ, որպէս զի կատարուելիք
ձերբակալութեանց պահուն ելմէ
պարսիկ հոգեւորականութեան եւ
կամ խուժանի կողմէ թեթեւ
շարժում կամ յարձակում մը լինի,
իսկոյն զինու զօրութեամբ պա-
տասխանեն անոնց. որովհետեւ,
ինչպէս երեւում է Շահի քաղա-
քականութիւնը այն է որ երբեք
իր ժողովրդի պատճառաւ քրիս-
տոնեայ հպատակները չի մնաստին
մազաչափ: Շահի քաղաքական այս
ուղղութիւնէն կը հետեւցնենք որ
Պարսկաստանն ալ թիւրքիայինը
ման իր ճշմարտման մատցած է,
բայց յամենայն դէպս, չենք կա-
րող ուրանալ որ Պարսկաստանում

(*) Մեր նախորդ թուով հրատարակ-
ուած թղթակցութիւնը կ'իջեցնէ:
ԽՄԲ.

ժողովուրդն է վատ՝ եւ ոչ կառա-
վարութիւնը, իսկ ժողովրդի գա-
տութեան բուն շարժառիթը իր
հոգեւորականներն են: Ուստի այս
համոզման մէջ լինելով նաեւ կա-
ռավարութիւնը կաշխատի այդ
Սէյիտ կոչուած կրօնականներից
հնգին եւ վեցին ձերբակալել որ-
պէս գլխաւոր թելադրիչներ:

Կարեւոր է յայտնել որ հայերը
դեռ հեռագրատան են ապրում եւ
ճիշդ տար 12 օր է: Ի հարկէ,
հայերս սկզբունքով միացած ենք
որ երբեք դուրս չի գանք, մինչեւ
որ մեր պահանջներին գոհացում չը
տրուի, անշուշտ, հետաքրքիր է
գիտնալ թէ ինչ է հայերի պա-
հանջը. նախ՝ տրուած մնասնե-
րը հատուցանել մօտ 8,000 թու-
ման: Երկրորդ՝ յանցաւորները
պատժել խստիւ: Եւ երրորդ՝ ա-
պագայի համար կատարեալ ապա-
հովութիւն կեանքի եւ գոյքի:
Տեղւոյս դատաւորը (որ կարծէ ը-
սել թէ խղճամիտ եւ հայասէր
մարդ մ'է) եւ քննիչները աշխա-
տում են այդ ամենը ձեռք բերել,
որպէսզի Մուղաֆէթէտ'տին Շա-
հին եւ թէ Ռուսաց դեսպանին գո-
հացում տուած լինին եւ ի հարկէ
նրանցով մեզ: Այսօր բոլոր պար-
սիկ հոգեւորականները կանչուած
են Դատաստանատուն՝ որոնցմէ մին
քանի օր առաջ փախած է թէհ-
րան, եւ հայերը իսկոյն հեռա-
գրած են յետեւից իր արածի վե-
րաբերմամբ:

Ինչպէս լսում ենք Ռուսաց դես-
պանատան պահանջը աւելի խիստ
պիտք է Պուլկարի կառավարութեան՝
որովհետեւ, պահանջում է Պ. Համ-
բարձում Սուլթանի պատուար-
ժէք: 20,000 բուլլի, խրատ մը
տուած ըլլալու համար թէ՛ այսու-
հետեւ կատուն չի փորձէ առիւծին
դէմ թաթ պարզել:

Վերջապէս՝ այս կուզեմ հասկա-
ցնել թէ՛ երեւում է որ այս խմո-
րը դեռ շատ ջուր կը վիրցնէ, եւ
ինչ որ ալ լինի հետեւանքը շատ
յաջող տեսնում ենք հայերիս հա-
մար:

Մի քանի օրից ամեն բան կը
պարզուի եւ մենք գոհացում կը
տանք մեր ընթերցողների հետա-
քրքրութեան ալ:

Գարագաշ-Սէրուցի

Բարիկ, 18/30 սեպտ. 99
Բարիկ եկող ամեն հայ՝ բարեպաշտական զգացումէ մը թելադրուած կը փափաքի տեսնել մայրենի եկեղեցին։ Ես ալ իբրեւ հայ եկեղեցւոյ զաւակ, նուիրական պարտականութիւն սեպեցի կիրակի օր մը երկու առաջնորդ բարեկամներու շնորհիւ այցելել «Հայկական Մատուռ»ը։

Զարմացումս չեմ կրնար նկարագրել. բայց պիտի աշխատիմ կարելի եղածին չափ գէթ՝ գաղափար մը տալ ընթերցողներուն։

Երեւակայեցէք սենեակի մը հարաւային կողմը սեղանի պէս բան մը՝ որուն առջեւ կեցած է տգէտ քահանայ մը որ նոյն իսկ Աւետարան չկրնար կարդալ, վարձ սենեակի հարաւարեւմտեան կողմը առանց չափիկի մի քանի դպիրներ, իսկ հիւսիսային կողմը երկու սեղէ բաւական թուով հաւատացեալներ։ Կարգապահութիւն և քրիստոնէական պատկառանքը սուած բաները՝ իրենց բացակայութեամբ կը փայլին դպիրներու քով, բարձրաձայն խօսակցութիւններ, աններգաշնակ երգեցողութիւններ։ Ամեն դպիր իր երգելու յատուկ եղանակը ու ձայնը ունի, հետեւաբար իրարու հակառակ ձայներ ըլլալով՝ անոնցմէ մէկը կաշխատի միւսին ձայնը իսկ փանել ու յաջողութիւն հպարտութեամբ կը պոռայ բարձրաձայն։ «Քեզի պէս քառասունը չորս հատը ճակատ կը հանեմ»։ Քիչ յետոյ եկեղեցական արարողութիւններու ամենէն հոգեաւանդն երգեցողութեան միջոցին յորում ամեն հաւատացեալ բազմաթիւ ան Ած. կաթօթէին՝ յանկարծ անպատկառ դպիր մը ձանձրացած կը յանդգնի պոռալ պատարագիչ քահանային։ «Առէք կերէք»ը չըսեմ»։ Այս գայթակղեցուցիչ տեսարանները որ մեր աչքերուն առջեւ պարզուեցան, հիմնովին խանգարեցին մեր կրօնի աւանդական սք. զգացումները, ու պահ մը այդ անուղղայ դպիրին ընթացքը յիշեցուց մզկի խայտառակ թատրոնի մը յուշարարին կոշտ ձայնը որ դերակատարին կը յիշեցնէ խաղաղութեան օրը։

Ու կ'անդրադառնամ այն երանելի օրերուն ուր Պոլսոյ առհասարակ ամեն թաղերու եկեղեցիները իրենց շնորհալի դպիրներով ու հմուտ դպրապետներով այնչափ զմայլելի ներդաշնայութեամբ ու պատկառանքով կեդրէին որ նոյն իսկ ամենէն անկրօնին հաւատք կը ներշնչէր։ Պատմական անհերքելի ճշմարտութիւն մ'է թէ մինչեւ ցարդ ունեցած գոյութիւնն իսկ մեր Առաքելական Ս. Եկեղեցիին կը պարտինք, բայց այն օրը երբ մեր սրբավայրերը անպարտաճանաչ, անհետաւոր և անձեռնդրուած պաշտօնեաներու ձեռքը կը մնան ու երբ ժողովուրդը կը պաղի այդ նուիրական վտայէն՝ այն

տառն մնաք բարով կրօնք, ազգութիւն և հայրութիւն։
Բարիկ Հայկական եկեղեցիի մը շինութեան համար երկար ատենէ ի վեր հանգանակուած տրամադրելի պզտիկ գումար մը կայ, եւ կարծեմ հոյն ալ Պաշտօնական կառավարութիւնը ձրիաբար պիտի տայ, ուստի գաղթականութեան հարուստ դասակարգը՝ որ արհամարհելի քանակութիւն մը չի ներկայացներ, եթէ ուզէ անմիջապէս շինութեան կրնայ ձեռնարկել։ Ուրով կունենանք մեր յատուկ եկեղեցին փոխանակ բողոքականներուն այդ խեղճ ժողովարանը վարձելու որ եկեղեցիէ ուրիշ ամեն բան է։

Նախորդ թղթակցութեանս մէջ բաց էի թէ քաջավէպ (*) ծախող դասակարգը կրնայ իր ապրուստը հայթայթել ատով. բայց ատենէ մը ի վեր ֆուստագի ժողովուրդին գրեթէ մէկ մեծ մասը սարսափելի հակակրօնութեամբ լսութեամբ այդ սովորուկ տարադրեալ և անը հայերուն հանդէպ առիթ չեն փախցներ նախատեւ, հայհոյելու և շատ անգամ ալ չաւանդանով սպառնալու։ Պաշտօնացի ժողովուրդը որ մենք կը ճանչնայինք իրենց ազնիւ ու վեհանքէն Տրէյֆիւսեան խնդրին ծախուէն ի վեր իրենց բարեբերուն ամեն պտգալի կողմերը մերկապարանոց ի յայտ բերին, Տրէյֆիւսի անուանին չուրջ մղուած պայքարն ոչ թէ պոռ հայրենասիրական է այլ ցեղային ու տնտեսական կռիւ մըն է։ Ըսել է զրպարտուած անմիջ հրեայի մը անունը պատճառ եղաւ լարուած ահաւոր ատելութիւններու պոռթկումին, ու հիմա ո՞ր է օտարականներ (խնդիր չէ թէ ինչ ազգի կը պատկանի) եթէ Պաշտօնային մէջ դրամ կը շահին սարսափելի չկամութիւն մը կայ անոնց գէթ. իբր թէ անոնք մէյմէկ Տրէյֆիւսեան ըլլային, կան վոհմակներ որ հակառէյֆիւսեան թերթի մը ազգեցութեան տակ, դերաբարբոք, երբ կը տեսնեն սըր ճարանի մը առջեւ Տալուրիկի զաւակ մը որ քաջավէպ կը ծախէ։ «Ապա լէ ժիշիվ» «աւշ ժիշիվ» կը պոռան երեսն ի վեր. եթէ խեղճ հայը յանդգնի փորձել ինքզինքը պաշտպանելու՝ եղած անարգանքներուն դէմ, ապահովաբար ծեծ մալ կուտէ՝ երկրի մը մէջ ուր ամեն զխաւոր շէնքերուն վրայ կը կարգաւ «Լիպեթէ, էկալիլէ» է ֆուսթէնիլթէ»։ Իլլումն աղետից մի քանի օրէ ի վեր ուստիկանութիւնն ալ սկսաւ հալածել այն հայերը որոնք այդ գործով կը զբաղէին, հիմա անել և անստոյգ վիճակի մը ենթարկուած են. իրենց հայրենիքի մէջ արեւնարբու քուրթիւն ու թուրքին ետթողանէն մազպուր տգաւառ ու եկած նետուած տիեզերքի ամենէն ազատ քաղաքներէն մէկուն մէջ ուր քաղաքակրթութիւնը իր գագաթնահետին հասած է, դարձեալ հա-

(*) Բախալիք. — Սպանական ժրտագ

լածուի։ Միթէ ճակատագրային չի՞ն մեր բազմաշարք եղբայրներուն այս անհանգուրժելի տառապանքները. եթէ ուստիկանութիւնը շարունակէ իր հալածանքը ինչ պիտի ընեն մեր սիրելի արեւակիցները, ձմեռուան խիստ եղանակներուն, բոլորովին օտար մթնոլորտին տակ։

Ե. Փ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԵՍԱԿՈՅՆ ԱՂԵՏԸ

(Շաբաթակարգի 69 քիտեմ)

Յորեկուան ժամը 11-ն է, խաղաղանի բացման պաշտօնական ժամը։ Բազմութիւնը վարկեան առաջ կուգայ կը խոնուի արտաքին սրահին մէջ։ Կարծես ամենքն ալ բան մը ունին իրենց միտքը. բան մը, որ սակայն չը տխրեցունք զիրենք. խնդում երես, զուարթ, հարմիր քացողի դէմքը ունին, միայն թէ անհամբերութեան որդը կը կրծէ իրենց սիրտը. լուռ ու մունջ, անկանոն քայլերով կը դառնան ու կը դառնան. մէկը իր երազը կը մոմտայ, որ 13 թիւը տուած է իրեն խաղախանան. մէկը քունէ արթնցածի պէս յանկարծ 17-ը կը պոռայ իր քայլերը ընդ հատիկով. միւսը անդին հայտնէրու մէջ խորատուգուած կը հետապնդէ գտնել խաղի դրութիւն մը, որ իրեն անպայման կերպով ապահովցնէ շահը։ Եւ այս ամենուն մէջ յաճախ անէճքներ կը պոռթկան ժամացոյցի սլաքին դէմ, որ այնքան ծանր ու դանդաղ կ'երկարէ յայտնի անհամբերութեան մը տառապանքը։ Ոչխարներ, դանկրտ, ւելու մարմալէն բռնուած կուզեն ժամ առաջ վիզ երկնցնել սպանաբանի կանանչ սեղաններուն։

Վերջապէս բազմացուած ժամը կը հասնի։ Սրահին բացման առաջին նշանը տրուելուն բազմութիւնը կը խուժէ ներս անանկ աճապարանքով, որ ու է երջանկառիթ մուտքի մը հետ բազմաթիւութեան չը դրուիր. հակառակ լուրջ ու պատկառելի մօտեւ մը ըլլալուն, անանկ տնդոտ ոգեւորութիւն մը կը տիրէ որ չիս վայելցներ իրենց պարզապէս դիւար հրմայեղիւն չափ անհամբերութիւն ցոյց կուտան մուտքի առաջնութիւնը ստանալու համար։

Սեղաններուն վրայ պոնքան աւանակ ձեւով մը բերած լեցուցած է կանուխէն պանքնթիւններու ահագին դէզեր և լուխներու փաղիւն կոյտեր, որոնք իրենց յալոտնական մագնիսականութեամբ կրնան հրապուրել ուշխարհի ամենէն տէր վիշ ու ամենէն ապաւանջ մարդիկը անգամ։

Այլ, կին, ծեր, երիտասարդ, կուլտ, Ռուսիտ, ամենքն ալ կ'ընթան կը շարունակ այդ սեղաններուն շուրջը ու սրտի հեծքերով կ'ապստեն կարգախօս պաշտօնէին, որ գոչէ «պարոններ, պատրաստեցէք ձեր խաղը»։

Տեսնել պէտք է այն տառն թէ ինչ թուղթի ու ոսկիի տարափ մըն էր, որ կը թափի սեղանին վրայ, Հնարավորը՝ իր իտէալական 13ին տեսքէն թուղթ ելած «13» կըսէ ու


կը նետէ թուղթի կտոր մը. միւսը 17. անդին «24» կը պոռան, և տեղի կողմէն «32»։ Վերջապէս յաւաճագ, բոշ, ևնառ քես էնքէ, սեղանը ծածկուած կը տեսնու պանքնթիւն ու ոսկիի գէզով, ամենքն ալ դատապարտուած անկուշտ կարասի մը փորը լեցուցու։ Ստանալ մեքենան կը դառնայ միշտ ու իրեն հետ պզտիկ գրեգալը, որ սահմանուած է երկու նիկ թիւը նշանակելու։ Գրեգալը խել մը աննպատակ ցատքը տուքներէ յետոյ, վերջապէս հասուցով մը թաւալ զլուր կ'իյնայ ծակերէն մէկուն մէջ։

«Զեռօ» կը պոռայ կարգախօս պաշտօնեան ու իր ընկերակիցնէ կ'սկսին նշանակելի փութկոտութեամբ մը թեւերով քաշել սեղանին վրայ փռուած դրամները և անոնց ախնջ տալու ասոր անոր խեղդուած ճիչերուն։

Այլ, անիծից արմատ Զեռօ. հակառակ իր ոչնչութեան շատ անգամ ջուր կը թափէ ամեն հայր և մնացած 36 թիւերուն— որոնց հետ նաեւ երազուած 13ին—այս ժէքը կը նստացունէ բաղդաւորութեան կողմանէ։ Զեռօն ոչինչ է և սակայն այն կ'ընդունէ, որոնք կը պարտին խաղախանէն Նորին Ա. Բարձրութեան վճարուած 2 միլիոնը եւ իշխանապետութեան ծախսեց սահմանուած 20 աշուղի միլիոնները։ Վրասի զի այդ ոչինչ կ'ընդունէ, Զեռօն է պանքային միակ առաւելութիւնը և տալով է, որ սոսկային անանկութիւններ տեղի կ'ունենան Ռուսիայի շուրջը։

(Շաբաթակարգի)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԿ



Յանուն ազգային արժանապատուութեան կը խնդրենք որ բարեհաճիք մեր անկողնակալ թերթին մէջ հիւրըկալել Ներկայ յօդուածը։

«Իրաւունք» լրագրողը 67 թիւ սեպտ. 4 շաբաթ առաջ թղթակցութեան բաժնին մէջ, Ա. Ե. ստորագրութեան ներքեւ թշնամական ու զրպարտիչ գրութեան ցաւ ի սիրտ կարգացինք, նոյնպէս տեղի ոյր «Հայրիկ»ի օգոստ. 21-28 եւ սեպտ. 11 թիւերն որոց «Կէլ գանթաբա բաժնին» մէջ անստորագրութեանս քննարկ, որոց կուգամք անաւորաբար գրել, ճշմարտութեան մօլ չափ իսկ չի չեղեցով։

Առաջին Պ. Ա. Ե. կըսէ. «տեղադրապետական գործերը անորոշ վիճակ մ'ունեն. երկու ամսէ ի վեր քննութիւնները վերջացած են եւ անկէ ի վեր վարժարանի վրայ խորհող իսկ չկայ. եկեղեցին ու դպրոցը ազգայնոր նուէրներէն գաւ զրեթէ լուսին ուրիշ եկամուտ մը. . . » կը հարցնենք իրեն թէ ո՞ր Պաշտօնական քաղաքներն երկու ամսէ պակաս վազանս ունին. միթէ վարժարանաց փակումն ու բացումն տեղական կառավարութեան ազգայնարութեամբ չեն։ Բոլորովին սխալ է թէ եկեղեցի ու դպրոց ազգային նոյն իրատուութեամբ կը կանգնալին. եկեղեցին ունի իր սեղանական անշարժ կառուածներ, որոյ և կամուսներով ինքն մատակարարելի հոգ, համեստ գումարով մալ վարժարանին կը նպաստէ, եւ հետեւապէս վարժարանի անշարժ կայունացնող մասնագիտական վրայ միացնելով ազգային ինքնաբերական ունեւորներ խաղաղութեան մէջ կը պահէ։

Երկրորդ Պ. Ա. Ե. կըսէ օրերկար անտէր թիւեր թէ հոգաբարձութիւնը եւ թէ թաղ, խորհուրդը, ոչ նիստ ըրած ու

նին եւ ոչ ժողովուրդէն զրամ հաւա-
քած ու կը հարցնենք իրեն թաղ. կամ
հոգաբարձութիւն, միթէ հանապազ
նիստ ընելու հարկադրուած է քանի
որ չունի առ ձեռն լուծելի խնդիրներ
որ թէ ինչո՞ւ համար է որ «ժողովու-
րդէն զրամ հաւաքող» չի կայ կը գրէ-
աւելի ճիշդ չէ՞ր ըսել, որ ես 10 ֆը-
րանքի ինքնաշօք ար ազգային տուրք
դրուեցայ, քանիցս ուղեցին, ինչ ինչ
առարկութիւններով չլծարեցի, ինչո՞ւ
կը կակաղէ ճշմարտութիւնն զրեւու-
ի միջի այլոց կը յաւելու թէ «նոր հո-
գաբարձութիւնը ընտրութեան համար կա-
ռավարութիւնէն պաշտօնական հրաւեր
ստացած եւ չեն պատասխանած
ու յայտնի դժգոհութեան առիթ տու-
ած են. . . » Ահա Պ. յօդուածագիր
այստիկ լի գոհութեան առիթն որ հրա-
պարակու կը գանգատի, միայն խնդ-
րին առանց պատճառն ու շարժառիթն
լուծարանելու: Օգոստոս ամսոյ մէջ
քաղաքիս ազգայիններէն մեծագոյն
մասը ինչպէս նաեւ թաղ. խորհրդոյ
ու հոգաբարձութեան անդամք (բացի
երեքէն) չըմկայ ջերմութեամբ գացած
էին, ու թ օրուան համար եւս տեղ-
ւոյս հոգեւոր Հովիւ Գեորգի հայր սբ. Ը
ու երաժիշտ դասատուն քաջակայ էին:
Այս բացակայութեանց մէջ օգոստ. 3ին
կառավարութեան պաշտօնական ընտ-
րողագիր եկած էր: Մեր Պ. Ծ իր խոր-
հրդատու բարեկամին Յակոբ Փափագ-
եանի հետ առիթէն կուղեն օգոստի
մաս մը ժողովրդեան սիրտը կը սիրտ-
շանդ, իրենք զիրենք հոգաբարձու-
թեան արժանատի ընտրելիներ ներ-
կայացնելու. շատ քիչ էր մնացեր որ
իրենց ծրագիրն յաջողէր. եթէ երեք
թաղ. խորհրդոյ անդամք եւս իրաց
հանդէպ չէզոք չը գտնուէին, այսինքն
ժողովրդեան ոչ մի պաշտօնական ծա-
նուցում չըրին. այսպէսով իրենց ծը-
րագիրն ջուրն ինկաւ. նամանաւանդ
աւելի զայրոյթ՝ զգացին երբ տեսան
թէ կառավարութիւնն պաշտօնապէս
նախորդ հոգաբարձութիւնը վերահաս-
տատեց մինչ ցնոր ընտրութիւն: Արդ՝
երբ այս անգամ ջող վիճակին բաղխեցան
յանկարծ մին շառագունեալ՝ «Հայրի»
մէջ անտուրադիր վարժարանի տնօ-
րէնութեան, ապա երաժիշտ դասա-
տուին ու Գեորգի Ս. Հօր անվայել ու
անպատշաճ թշնամական զրպարտու-
թեամբ նախադրածակ եղած է. իսկ
Պ. Ա. «Իրաւունք»-ի մէջ նոյն սրտով
ու հոգով, որոյ պատճառն էր առա-
ջին իրենց հոգաբարձու չընտրուիլը
եւ երկրորդ ՄԱՐՏական կուսակցու-
թեան անկախողութեան մատուցելն որ
պի իրենի նախ «Մարտ» եւ ապա

«Նոր Կեանք» թերթեր բերելով նոր
Մարտական կուսակցութիւն մը ստեղծ-
եալու կը տեղեկան, բայց մեզ հետ
մէկտեղ պաշտօնեայք ալ ամեն կերպով
ջանացինք, քաղաքիս ազգայնոց մէջ
նոր կուսակցական սերմերու հանդէպ
զօրավիշ մը լինել, որով հարկադրուե-
ցան «Մարտ»էն եկած տոմսերը ամօ-
թապարտ յետս ճամբել: (*)
Արդ՝ մենք վերջապէս գոհ ենք մեր
Հայր Ս. ի պաշտօնավարութենէն որ
կատարելապէս պաշտօնին գիտակ ու
հեղուկեան տիպար մընէ երանի թէ մեր
մէջ շատեր լինին այդպիսիք (**) այն
ատեն գուցէ հայութիւնը այս օրհասա-
կան վիճակին չենթարկուեր: Նոյնպէս
գոհ եւ երախտապարտ ենք տեղւոյս
ուսուցչական խմբին որոնք կարելի
եղածին չափ զգրողի ընթացքը բարձր
դիրքի մէջ պահելով հանդիման, կու-
սակցական խուլ հակառակութեանց
հանդէպ ալ խորհրդոյս յարած ու հա-
մերաչխ գործունէութեանց տիպար մը
եղած են շուրջ երեք տարիներէ ի վեր:
Արդ՝ կը խնդրենք որ ներկայս բա-
րեհաճիք ձեր ամենամօտ թիւին մէջ
հրատարակել յուղութիւն գայթակ-
ղեալ սրտերու:

Ի դիմաց թաղական խորհրդոյ
ԱՍԵՆԱԿԵՆ ԽԱՅԻՈՐ ՄԻՐՃԱՆԵԱՆ
ԱՍԵՆԱԿԱՅԻՐ ՊՅՂՈՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ:

ԼՐԱՔԱՂ

ՎԻՃ. Կաթողիկոսը Պոլսոյ Պատ-
րիարքին կոնդակ մը ղրկելով, հո-
գելոյս Ալէքսանդր Տ. Գրիգորիս
Սրբազանի մասը կը յիշէ եւ կը
յայտնէ թէ հանգուցեալը՝ իր եւ
կեղեցական կոչման միշտ հաւատա-
րիմ, իւրովսն ծառայո՞ծ աղգին,

(*) Դաշնակցակ սննդէն եկածները ինչ
բարձր. նոր Կեանք եւ Մարտ թերթեր
բերելը նոր մարտական կուսակցու-
թիւն մը ստեղծել, կը նշանակէ. մի
գուցէ դուք ալ Հին կուսակցութեան
մը պատկանելիք որ նորէն չէք ակնու-
թիւր: Յաւաք բան. երկուք ու կէս
հայ գտնուած տեղն ալ զիրար չը հաս-
կնալու աստիճան կուսակցական պայ-
քար կը տիրէ, պայքարներ՝ որոնց հե-
տեւանքը «ըսի, ըսա» ներքէ անդին չի
անցնիր, ալ միայն տեղական ազգային
գործերը կը վտանգէ:
(**) Այդչափ առաջ մի՞ երթաք:
ԽՄԲ.

պարկեշտ եւ գործունեայ եկեղեցա-
կան մըն էր որուն հոգւոյն հան-
գիստ կը մաղթէ:

—Նպաստից յանձնաժողովին ու-
րոշման համաձայն, Հաճնոյ մէջ
Որբանոց մը բացուած է, ուր կը
խնամուէին ու կը դաստիարակուին
առ այժմ 25 որբեր:

—Վերջին տարիներն Եւդոկիա.
յի ունեւոր դասակարգէն 20ի չափ
հայ տղաքներ Մարտուանու գօլէճը
կը յաճախէին. այս շրջանին այդ
տղաքներէ 14ը Սանատորիան վար-
ժարան ղրկուած են:

—Երուսողէմայ Տ. Յարութիւն
Պատրիարքը իր քսակէն 400 ոս.
կի ծախսելով Սիօնի Ս. Փրկչի
վանքին շրջապատը շինել տուած
եւ դրան վրայ իր անունը քանդա-
կած է:

—Ջարդերու ատեն թնդանօթի
հարուածներով քարոքանք եղած
Եղեւսիոյ եկեղեցւոյն վերաշինու-
թիւնը արտօնող իրաւունք եւր է:
Ահա կայսերական մեծ բարձր մը
(*) որ երկու տարիէ ի վեր կը զը-
լացուեր:

—Կիպրոս Երուսողէմայ Աթո-
ռին թեմը ըլլալով, Յարութիւն
Պատրիարք այդ կղզին հոգեւոր
հովիւ կարգած է Տ. Պետրոս Վ.
Սարաճեանը:

—Մաւիտ կիսամսեայ հանգէ-
սը որ Տպագր. Տեսչութեան կող-
մէ անպայման կերպով վերջերս դա-
դարման դատապարտուած էր, ար-
տօնուած է վերստին հրատարակ-
ուելու:

—Ռուսիոյ մէջ դատարաններու
տուջն Հայոց հայրենի լիզուաւ եր-
դու ընելն վերջնականապէս ար-
գիւրած է հակառակ կաթողիկո-
սական ընդդիմութեանց. այժմ ա.
մեն հայ դատարանի տուջն Հայ
կամ Ռուս քահանայի տուջնոր-
դութեամբ պարտաւոր է Ռուս լիզ-
ուաւ երգնուլ:

—Կարգ մը որբանոցներու վա-
րիչ մարմինները բացառիկ նպաստ-
ներ խնդրած են Պատրիարքարանէ
յառաջիկայ ձմրան համար: Նպաս-

տից Յանձնաժողովը Մանկունի Սր-
բազանի նախագահութեամբ կա-
տարած վերջին նիստին մէջ որոշեց
բոլոր որբանոցներուն շրջաբերա-
կան մը յղել, որուն մէջ պիտի յայ-
տար րէ թէ նպաստից անտուկը
ի վիճակի չէ բացառիկ նպաստներ
զրկելու եւ թէ հարկ է իրենց հա-
մար որոշուած նպաստին համեմա-
տութեամբ ճշդել իրենց ծախքերը:
Ահա այս «նպաստից անտուկը ի
վիճակի չէ» բացատրութիւնը խը-
թան մը պէտք է ըլլայ արտասահ-
մանի բարեկեցիկ հայոց, որպէս
զի փութան ձմեռը չի հասած նը.
պատաներ ղրկելով ապահովել մեր
խեղճ որբերու կեանքը:

Ակնայ մէջ ալ նոր որբանոց մը
բանալ որոշած է Յանձնաժողովը:
Այս որոշում մղում մը ըլլալու է մեր
արտասահմանի Ակնցիներուն, որոնց
բարեկեցութիւնը կը գերազանցէ
թէ վաւապականցիները եւ թէ Ա-
րաբկերցիները որոնք ինչպէս յայտ-
նի է, վերջերս Գահիրէի մէջ ըն-
կերութիւններ կազմելով հրաւիրե-
ցին իրենց հայրենակիցները իրենց
ծննդավայրի սրբերը խնամելու
նուիրական գործին:

—Պուրկազէն կը հաղորդեն թէ
ամսոյս 17ին մի քանի Պուրկա-
րներ Հայոց արճարանի առջեւ զաղ-
թական հայ մը ծեծելով՝ հոն ներ-
կայ գտնուողները հայհոյալի խօս-
քերով կը զրգոնեն, որպէսզի եթէ
հայերու միջամտութեամբ կռիւը
սաստկանայ այն ատեն իբրեւ խը-
ռովարաններ գանոնք երկրէն ար-
տաքսել տան: Բարեբաղդաբար
հայերը անոնց այս վատ դիտաւո-
րութիւնը հասկնալով՝ բնաւ չեն
պատասխաններ իրենց դէմ եղած
նախատանաց: Շատ չանցած՝ հա-
րիւրէ աւելի Պուրկարներու խումբ
մը կը յարձակին մաքսատան վրայ
եւ կուզեն ծեծելով դուրս հանել

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (47)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊՍԿԵՐ ՄԸ

— 0. —
ՄԱՍՆ Բ.

Ճշմարիտ անձնու րացները՝ որք այն-
քան հազուադէպ եղած են ամեն ժա-
մանակի եւ ազգի մէջ, 90-93 տարած-
ուող շրջանին մէջ, հիասթափումի այդ
ժամանակամիջոցին մէջ ծնեցան. ա-
նոնք զոհուեցան. բանաւ, կախաղան եւ
աքորի վրայ ճշմարիտ հայրենասիրա-
կան բարձունքէ անարգանքով նայե-
ցան ստոյգ մահուան մը գիրկը նետ-
ուելով աներկիւղաբար: Առանց փառա-
սիրական նկատումի, անոնք որ, մե-
ռան եւ անոնք որ վերահաս վտանգ-
ներէ պրծեցան անմահութեան պսակը
բոլորեցին իրենց անունի շուրջը:
Իրեւակայեցէք անգամ մը ատենը եւ
պայմանները որոնց մէջ գործեցին ինչ
որ իրենց յոյս եւ ոգեւորութիւն կը
ներշնչէր առաջինը՝ թունդ համոզումի
արդիւնք եղող հայրենասիրութիւնը,
երկրորդ՝ բաղադրանքի մէկ քանի յե-
ղափոխականներու ներշնչած նիւթու-
կան օժանդակութիւններն էին: Խօ-
սիլ տուէք Սասունի եւ Ջէյլուքի վեր-
ջի ապստամբութիւնները եւ անոնք կը
յուսամ աւելի փառաւոր փաստերով ը-

սածնուս ճշգրտութիւնը պիտի ապացու-
ցանեն:

Իրաց այս վիճակին մէջ պատրաս-
տուեցաւ Պոլիս եւ դաւաճները երկուս-
սարդութիւն մը որ մինչեւ 90 գործե-
լու կոչուած հասուններու մէկ մասին
դաւալ ութեան վրէժը լուծեց: Անի-
կայ պատկառելի թուով այնպէս մը
փարեցաւ ազգային դատին եւ հաւա-
տարիմ միաց աղգային զօրչակին որ
հիացումի արտայայտութիւններ խլած
հայ եւ օտարազգի ամեն շուրջներէ:

Երկաթէ պատրիարքի մը կենդանա-
ցնող շունչին տակ խաչագողներու հա-
լածանքը սկսաւ, դաւաճանները սկսան
մաքրուիլ եւ ճշմարիտ անձնու րացները
գերազատուիլ ազատ յեղափոխական-
ներէ որոնք ճարպիկորդի կերպով ի-
րենց անուշով երգնուլ իսկ սովորեցու-
ցին իրենց կուսակցութեան պատկա-
նողներուն:

Մինչդեռ ներքին խուլ պատրաս-
տութեան մը ամեն յայտնի նշանները
կը նշմարուէին իզմիրեւան յաջողած էր
ընդհանուր անուշով մասնաւորի երե-
ւոյթին տակ ներուժ մը ձեռք բերիլ
Սուլթանի կառավարութիւնէն:

Այդ ներուժի միջոցին Յովհաննէս
աղան որ այս տեսակ բաղդաւորու-
թեան մը չէր սպասէր յանկարծ օրին

մէկը ազատ արձակուեցաւ. անոր ա-
ռաջին գործը եղաւ Պոլիս մեկնիլ. ուր
զաւով Վահրամը նախ եւ առաջ եւ յե-
տոյ շատ մը առեւտրական ծանօթները
դատաւ:

Իրիզ էֆէնտի եւ Մինաս Ակնի մէջ
էին ասոր համար Վահրամ խորհուրդ
տուաւ Յովհաննէս աղային որ հակա-
ռակ իր ջնքի փափաքին Ակն չմեկնի,
որովհետեւ այդ բանը շատ աղիտաբեր
կրնար ըլլալ իրեն համար, թէ Մինաս
մահու չափ լարուած իրեն դէմ կրնար
զինքը նոր դատապարտութեան մը
ենթարկել, լաւադոյն էր Պոլիսի մէջ
առեւտրական ձեռնարկ մը ընելը:

«Այդ պարագային ոչ նուազ պար-
տականութիւն եւ խելացութիւն է
Վերջինէն եւ Հրանդը հոս փոխա-
դրելը, ըսաւ Յովհաննէս աղա անոնց.
կարծախնէ՛ր ալ ու մաշ:

—Ձէ՛, սիրելի Յովհաննէս աղա, չէ՛
դուն որ բանտին մէջ հասունցած ես
ազգային ղդացումի տեսակէտով հայ-
րենի օճախը մի քանդեմ. եթէ քեզի
հետեւին ուրիշ հայեր ո՛ւր կ'երթայ
մեր վախճանը. ինչի ի խնդիր ելած
ենք Հայաստանի մը այնպէս չէ՛.
բայց անքոյթ կեդրոն մը անցնելու եւ
ապահով ապրելու այդ դրութեամբ Հա-
յաստան կը դատարկուի՛:

Յովհաննէս աղա յոյժ բանաւոր գը-

տաւ Վահրամի առարկութիւնը եւ հա-
մակերպեցաւ անոր խորհուրդներուն:
Այդ մասին ալ իսկոյն դրեց իր կնոջը:
Վահրամ իր կարգին Հրանդին գը-
րեց: Աւելորդ է ըսել Պոր պոլսուհի
Տիկին Վերջինէն Յովհաննէս աղայի
արձակումի բերկրաւոր լուրը անոնցէն
ետք Յովհաննէս աղայի պէս բոլոր-
վին Պոլիս փոխադրուիլ երազեց սա-
կայն իր գէժ առաջին արդեւը հանդի-
սացաւ Հրանդը որ աղերսական եւ
ազգու ձայնով մը

«Մայրիկ, չէ՛ Ակնէն երթալ չեմ
ուզեր, կըսեր:»

Տիկին Վերջինէն որ ճշմարիտ եւ հայ-
րենասիրական զգացումով ալ ուժով
պատրաստուած մայր մըն էր Պոլիս եր-
թալու խօսքը չեկորդեց Հրանդին:
Կը վերջացնէր այս գլուխը ըսելով
որ Յովհաննէս աղայի Աքեաի բանտին
մէջ անցուցած հինգ տարիները զինքը
շատ մաշեցուցին. կասկածելի տժգու-
թիւն մը կը պատէր իր դէմքը յաճախ.
Ֆիզիքական առջի կորուրդ եւ սոցիա-
լիսթիւնը չէր մնացած. գլուխի ցաւ
եւ պոստիներ կուռնեմար: Տակաւ ա-
տոնք քրքրիկ կերպարանք ստացան եւ
իր վայելելիք ազատութիւնը թունա-
ւորեցին:

Շ. Կամուսարախան
(Շարունակելի)

այնտեղ աշխատող գաղթականները, որոնք վտանգը նախատեսելով իսկոյն գործադուլ կընեն ու կը հեռանան: Պուլկարները իրենց նպատակին հասնելու մասամբ, մաքսատան և քարափի գործերը հայոց ձեռքէն խլելով, խեղճ գաղթականներու ապաստանարանը կարծաւ ազատ Պուլկարիան ևս թուանիոյ անխիղճ ընթացքին պիտի ուզէ՝ հետեւել:

Ի Խ Թ Ա Ր

Տիւնեանը հէյ պիտի արաքին տա կազմեա պետելի բէշին էօտէնի: «Խրաւունք» տախի պաշգաւ թարիք թուածազտը:

Իշխէ՛ սէնէնին օնունճը այլնա գատեմ պատմագտայրը: Ֆազալի մէօհթէրէմ ապօնէրէրիմիզին պիր գըսըմ էլան կազմեա պետելինի էօտէմէմիշ տիր: Պիւնաէն ալէյհ սոն տէֆա օլարագ իրթար իտէրիզ քի հէր քիմքի պօրճունը Պի. ԼԱ. Թէլէիթի ԻՅՅԱ. Իթմէզ իսէ հակտեմբեր 1 տէն սոնրա մէճպուր օլաճաղըզ օնլարա կազմեա կէօն տէրմէմէյէ, մաթուպըմըզ թաւէպ իթմէքտէն վազ կէշմէքսիզին:

Պու սէնէյէ մահսուպէն էլան հիշ պիր բարա էօտէմէմիշ օլանլարտան՝ կազմեա իսիմէրի իլէ ալաճաղըմըզ թաւէպ իտէր իսէք՝ ափի պուլուրմալը տըրլար:

Թ Ի Ի Ր Գ Ի Ա Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ Ը

«Թայմըզ»ըն Սթանպօլ մուխպի. ըր աթիտէքի հափտիսին սահիհ օլտըղնա ըսրար իթմէքտէ տիր:

«Երտըզ սէրայընտա գարըզըզըզ հիւքմ իթմէքտէ տիր: Իւլէ. մալար տէֆաթլէ տէրտէսթ օլընուպ, սէրպէսթ պըրագըմագտա տըրլար. պէօյիւք ֆամիլիալար տան կէնճէրլէ հապսանէլէր տօլմագտա տըր: Իճրա օլունան իսթինթագլարտան անլաշըմըշ տըրքի Սուլթանըն նէֆսինէ գարըզ սուրի գաստա հաղըրլանըշլար. պու թէշէպպիւսին սէրկէրտէսի մըսըրը պիր պէյզատէ իմիշ:»

— Սթանպօլտան՝ ալաֆրանգա հոկտեմբեր 1 թարիխի աթիտէքի թէլէկըրաֆը էքլէտէն նազլ իտէրիզ:

«Խոսուսի հափտիսաթա կէօրէ, Սիվազ, վան վէ Սուշ վիլայէթլէրինտէ գարըզըզըզլար զուհուր իթմիշ տիր:

«Սիվազ վալիսի Լարէլէնիշ, պիր թագըմ էրմէնիլէր գալթ օլընմըշ:»

— Էվլէլէի նուսիսիդտէ պիլտիրմիշ օլտուղըմըզ իւզրէ, Ենմէն էյալէթինի խտիվիէթէ թահվիլ իթմէք մէսէլէսի ճիտտի սուրէթ տէ Երտըզտա վէ իսլամ էնաճըր մէյանընտա տէօկիւլմէքտէ տիր: Ենմիտէ պիր վազըթտան պէրու օսմանը իտարէսինէ գարըզ զուհուր իտէն ըսնան նիհայէթ իտա. մէի հիւքիւմէթի թէպտիլ վէ Են.

մէնիլէրէ նիմ տէլէճէ սէրպէստի. յէթ վէրմէյէ Սուլթան Համիտի մէճպուր իթմիշ տիր:

Ինկիլիզ կազմալարըն ալտը. զը մալիւմաթա կէօրէ, Ենմէն էյալէթինի իւշ վիլայէթէ թագսիմէ, սուլթանըն էմնիլէթինի ճէլպ իթմիշ օլան Հիւսէյին բաշա. յը խտիվ նասպ իթմէք վէ տիկէր մէմուրլարըն թայինի մէրգուլ բաշանըն ըէյինէ իհալէ էյլէմէք խու. սուսընտա Երտըզտա գարար սըպաթ իթմիշ տիր: Քէզա Ենմէնին ումուլ մաքէրիյէ գօմանտարը խը. տիվին մայէթինտէ պուլունաճագ. պու սայէտէ՝ պէօյիւք զապիթլէրի թիւրք օլմագ շարթլէ Արապ գապիլէրինտէն 60 տան 100 ալայ սիւվարի թէշքիլ օլընմագ: Վէր. կիլէրին թահսիլի իշիւն Եննի պիր ուսուլ թէրթիպ օլընմագլէ, սէնէ. վի ալթը միլիտն լիւրա պիր վարի. յալթ թահմին օլընմագտա ըմըշ, Երտըզտա ալապ թարաֆտարլարը Ապտիլ խիւտտըն լահպէրիկի ի. լէ միլթիթիպէն Սուլթանը պու թէրթիպաթըն իճրասընա թէշիլիզ ու իզնա իթմէքտէ իմիշլէր: Ու. մուլ բանիսլուիմ թարաֆտարա. նը պու ըէյի թասվիպ էյլէմէքտէ տըրլար:

— Սուլթանըն սէր թէշիլիթաթ. ճըսը Սիւնիւր բաշա վէֆաթ իթմիշ տիր:

Ս Ի Ի Թ Ե Ն Ե Վ Վ Ի Յ Ե

Գանեատան գապուլ իթմիշ օլտըղըմըզ պիր մէթուպ Եունա. նիսթան Գրալիցանըն կիրիտէ կիթմիշ վէ կիրիտլիլէրտէն ֆէվզէլատէ սէվինճլէ գապուլ օլընմըշ օլտը. զընը Եալմագլէ պէրապէր, պու սըրա կիրիտ իսլամարը առանըն հիւքիւմէթի հաղըրէսինին առա. լէթ ու միւսալմաթ իւզրէ իտարէ իթմէսինտէն մէմուն գալարագ հիճրէթտէն սարֆը նազար իթմիշ օլտըզլարըն պիլտիրիօր: Քէզա խրիսթիյան վէ իսլամ էհալի պէյ. նինտէ օլ տէրէճէ Եազընիլէթ հա. սըլ օլմուշ տըրքի իսլամ գըզլար. տան 8-10 ըրում տէլիգանլարը ի. լէ իզտիվաճ իթմիշլէր:

— Կիրիտ սէր գօմիսէրի Բրէնա Եօրկիւնին ինկիլթէրա վէլիսաճըր Բրէնա տը կալըն ըէրիմէսի իլէ նշանլանմըշ օլտըղընը «Գուրիէ տէ պալգան» զաննէն պիլմէք իս. թէյօր:

— Քէզէ «Թայմըզ»ըն Ալիւնա. տան ալտըղը մալիւմաթա կէօրէ, Եունանիսթանըն Բրէնա Նիքօլա Գարատաղ Բրէնսինին Հէնիա քէ. ըրմէսի իլէ նիշանլանմըշ:

— Պու կիւնէ գատար ինկիլթէ. ըրա վէ թարանալալ պէյինտէ մուհարէպէ իւն օլընմամըշ տըր. թէրթիպաթըն մաքէրիյէ տէվալ իթմէքտէ տիր: Ինկիլթէրանըն միւսթէմիլքաթ նազըրը Ս. Շամ. պէրլին էմիրնամէլէր Եօլլայուպ պաղը ինկիլիւզ միւսթէմիլքաթըն

տան թարանալալ սինօրընա ա. քէր Եօլլանըմաճըն էմր իթմիշ տիր:

Պօէրլէր թարանալալըն հէր պիր նօզմաճընտան կէօնիլիւ Եա. զըլմագ իշիւն պէօյիւք շէհիլէրէ գօշմագտա տըրլար: Ինկիլիզ կա. զէթալարըն պէյանաթընա կէօրէ, սինօրլար իւզրէրինտէ պու կէօնիլ. լիւլէր շէթէլէր թէշքիլ իտուպ, հուտուտը թէճափուլ իթմէքտէ վէ ինկիլիլէրէ հազարէթ էյլէ. մէքտէ իմիշլէր:

Ինկիլթէրանըն բարլըմանը հոկ. 5 տէ թէճէմիւ օլընմագ տըր. մուհարէպէնին գաթիէն իւնը բարլըմանըն գարարընա թէվագ. գուֆ իտէճէք կէօրինիօր:

Շուրաճը ճալիպի տըզգաթտըր. քի, հիշ պիր թարաֆտան մէսէ. լէի սուլհէն հալ իթմէք թէքլի. ֆի իլէ պիր տէվլէթ մէյտանա չըզմատը. պու պիր տէլիլի գալի. տիրքի Լա Հէյտէ թէճէմիւ իտէն սուլհ գօնֆէրանսը հիշ պիւ նէ. թիճէ հասըլ իթմէմիշ:

— Բուս խարիճիյէ նազըրը գօնթ Սուրալիլէլ Բարիտէ կիթմիշ օլմալլէ Շանգ-Էլիլէտէ վէ խարի. ճիյէ նէզարէթինտէ անըն շէրիֆի. նէ վիլաֆէթլէր քէշիտէ օլընմըշ տըր: Սուրալիլէլ պիր հաֆթա Բարիտէ գալաճագ տըր: Իշպու. միւլագաթա բօլիթիգաճա պէօյիւք էհէմիլիլէթ վէրիլմէքտէ տիր:

— Պալթիկ վէ Գալա տէնիլլէ. ըր պիր պօղաղ աշմագլէ պիրլէշ. տիրմէք մէսէլէսի պիր վազըթ. տան պէրու Բուսիանըն զէհնին իշլալ իթմէքտէ օլտըղը մալիւ. իմքէրաթօր Ալէքսանտր Բ. մէք. քիւր պօղաղըն բըլանըն թէրթիպ իթտիրմիշ իտի. շու սըրա մէսէլէ ֆիլիլիթա թահվիլ օլընուպ, իշէ թէշէպպիւս իթմէք իշիւն բուս մալիլի նազըրընըն բարթթընա պէքլէնիլմէքտէ իմիշ, վիլա 500 միլիոն ֆրանք մէսարիֆ հէսապ օլընմըշ տըր: Շու սըրա Բուսիա պիր թարաֆտան չըմէնտըֆէր մէ. սարիֆաթըն տիւշիւնմէքտէ ի. ըէն պու մուհիմ մէպաղըն թէ. տարիքի գօլալըզլէ միւմքին օ. լամագ:

Մէքքիւր պօղաղ Բուսիանըն էն միւնպիթ մահէլլէրինտէն կէշէճէ. կինտէն հուտուպ կէլէճէր օլան թիճարէթ հէմ ֆաիլի վէ հէմ մէքքիւր մէպաղըն ճէսթէ ճէսթէ էօտէմէկէ քիֆայէթ իտէճէք ի. միշ, Պունտան մաստա իքի տէ. նիլին պիրլէշմէսի իլէ մուհարէ. պէլէր իշիւն Բուսիա պէօյիւք մէնֆաթաթ ու սուհուլէթ էլտէ ի. տէպիլէճէք տիր:

Տ Ա Խ Ի Ի Յ Ի

Ֆէլամմէթիւ Բրէնա Ֆէրաթ. նանտ հաղըթլէրի պիր հաֆթա. տան պէրու շէհրիլիլէ Եազըն պուլընան Էվքսիոկրատ սէրա. յընտա պուլընտըզլարը կիպի, տա խիլիյէ նազըրը Ս. Բատալաֆօ

տախի պիր գաշ կիւնտէն պէրու վարնայա կէլիլ օլուպ Բրէնա հաղըթլէրինին հուզըրընա գա. պու օլընմըշ վէ մէմալիլէր ա. վալլ. տախիլիլէսինէ տալիւ Բրէն սին սիւվալլէրինէ պաղը իղաճալ վէրմիշ տիր:

Տիւն տախի վիւքէլալ բէյիսի Ս. Կրէքով Պուրկազ վարթը ի. լէ շէհրիլիլէ վասըլ օլարագ Բր. Բէնա հաղըթլէրինին հուզըրընա չըզմըշ տըր: Շայիաթա կէօրէ Ս. Կրէքով պիւլիւն գապիլէ. նին իսթիֆասընը Բրէնսէ թագ. տիմ իթմիշ:

Սօն ինթիլիալար իլէ Բատը. լալօֆ թարաֆտարլարը 105 սէ. լէ մէճիսի մէպուսանըն էքէթի. յէթինի թէշքիլ իթմէքտէ օլտըզ լարընտան, Էկէր իսթիֆա մէսէլէ. սի թաստիգ ու գապուլ օլընըրի. սէ, Եննի վիւքէլալըն թէշքիլ պու սէֆա Բատալաֆօֆա իհալէ օլընմագըզ վանն օլընիօր:

Ղ Ա Ճ Ա Պ Ա Տ Ո Ւ Ն

ՏԻԱՄՈՏԻ ԵՒ ՆԱՍԱԿԱՐԴՈՒՄԻ
Նաւաւաւոյի մօտ Ն. 389

Տիար Ճիհանկիւլեանի սոյն նորա. հաստատ վաճառատան մէջ կը գտնուին ծխախոտի եւ թղթագործի ման տ. սակները:

Փախաքիլի է որ ամեն դասակարգ. ազգայինք հոն յաճախեն ու իրենց գնումները Ս. զատի այդ շարքաւ պիւնուրէն ընեն:

Մ Ե Մ Վ Ի Ճ Ա Պ Ա Ճ Ա Ղ Ա Պ Ա Տ Ո Ւ Ն



Ս Օ Ս Ո Ւ Ն Ք Ա Ղ Ա Պ Ա Տ Ո Ւ Ն

ՊՈՒԼԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՒՆ ԵՐԱՆԱՍԱՐՈՒՄ	
Ա. ՊԱՐԳԵՒՆ Է 500,000 ՁԻ. ՈՍԿ	
50,000 տոմսեր հրապարակ հանա	
են, որոնց 25,000ը պիտի շահին Ե.	
սեւեալ կիրպով, ներկայ տարւոյ՝	
Յունիս 9ին 1,500 թիւեր 92,680 ֆր	
Յուլիս 7 1,500 » 135,180 »	
Օգոստ. 4-5 2,000 » 241,780 »	
Սեպտ. 3-4 » » 309,080 »	
» 23-24 » » 363,250 »	
Հոկտ. 13-31այ. 16000 » 3389,040 »	

ԳԻՆԵՐ ԵՆ ՊԱՐԿԱՐԻՅ	ՄԵԿԱՆԻԿԱ	ՍԵԿՈՒՐԻՅ	ՍԵԿՈՒՐԻՅ	ՍԵԿՈՒՐԻՅ	ՍԵԿՈՒՐԻՅ	ՍԵԿՈՒՐԻՅ	ՍԵԿՈՒՐԻՅ	ՍԵԿՈՒՐԻՅ	ՍԵԿՈՒՐԻՅ
Կէս	Փաւոր	Փաւոր	Փաւոր	Փաւոր	Փաւոր	Փաւոր	Փաւոր	Փաւոր	Փաւոր
5	2	2	2	2	2	2	2	2	2
10	4	4	4	4	4	4	4	4	4
15	6	6	6	6	6	6	6	6	6
20	8	8	8	8	8	8	8	8	8
25	10	10	10	10	10	10	10	10	10
30	12	12	12	12	12	12	12	12	12
35	14	14	14	14	14	14	14	14	14
40	16	16	16	16	16	16	16	16	16
45	18	18	18	18	18	18	18	18	18
50	20	20	20	20	20	20	20	20	20
55	22	22	22	22	22	22	22	22	22
60	24	24	24	24	24	24	24	24	24
65	26	26	26	26	26	26	26	26	26
70	28	28	28	28	28	28	28	28	28
75	30	30	30	30	30	30	30	30	30
80	32	32	32	32	32	32	32	32	32
85	34	34	34	34	34	34	34	34	34
90	36	36	36	36	36	36	36	36	36
95	38	38	38	38	38	38	38	38	38
100	40	40	40	40	40	40	40	40	40

ՕՐԲԷԼ «ՔԼՈՎՏՐԱՎ»

ՊԱՆԸՐ ԲԱԶԱՐ Ն. 462
Ղաւաւա

Այս պատկերը վերջին մեր տնօրինութեան տակ մտն. ըլլալով իր առջի վիճակը բոլորին բարեփոխուած է. յոճա. խորքները ըստ ամենայնի զոր կացուցանելու համար հակառակ համաւտ գնիւրուն, մաքրութեան մեծ հոգ ու խնամք կը տարուի:

10—1 ՅԱՆՈՐ ՄԻՆԱՍԵԱՆ

Отговорникъ Н. Драгулевъ

Печатница на Хр. Н. Войниковъ